

ները ձեռունին երկնցույն՝ որ իջեցը-
նեն սուրբերը Սիէօդայի գլուխը . բայց
տղան մէկէն նշան տուաւ իրենց ու կե-
ցուց : Իննալ տուաւ դռները . ու կեղ-
ծելով որ հաշտութիւն պիտի խօսի
հետերնին՝ իրեք չորս հոգևով դուրս
ելաւ . ելածին պէս մէկէն ձեռքը սու-
րին դրաւ , կատաղութեամբ մը վազեց
անոնց վրայ , որ իրեն հօրը գլխուն՝
մերկ մերկ սուրբերը կը շողացնէին , և

անանկ փայլակի պէս սկսաւ հարուած-
ներ խաղցնել , որ վերէն պահապան
զօրքերէն շատին ոգին բռնկեցաւ ու
նոյնպիսի արագութեամբ գահավիժաւ
բար իրեն օգնութեան հասան : Սիէօ-
դայի հետ եկող զինուորներէն և ալ մէկ
մը կենդանի մնաց , և ինքը որդւոյն հետ
միատեղ փառօք ու անպատմելի ուրա-
խութեամբ քաղաքը մտաւ :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Յ Դ Ե Պ Ք

Հիմակոսան Արեւելեան պատերազմը : (Տես երես 286)

1854

ՅՈՒՆՈՒՍԲ

4. Արեւմտեան տէրութեանց դաշնակից նաւա-
տորմիդները Վոսփօրը կը թողուն ու Սև ծով
երթալու ճամբայ կ'ելեն . բայց Գաղղիոյ ու
Անգղիոյ զեապանները առաջուցմէ Սեւաս-
դոքոյի ռուս նաւատորմին հրամայող ծո-
վակային կը ծանուցանեն որ այս շարժումները
Օսմանեան տէրութեւ ծովեզերեայ ամրոցներ
ու նաւահանգիստները ընդգէմամենայն յար-
ձակման պաշտպանելու համար է : Այս ծա-
նուցումը այն վախճանաւ կ'ընեն՝ որ ու իցէ
նաւական կռուոյ առջին առնեն , և ցուցը-
նեն որ խաղաղութիւնը պահելու համար միայն
նաւատորմիդները Սև ծով կը մտնեն :
5. Տրուէն տը Լիւի այդ ծանուցագիրը կը խաւ-
րէ Լոնտրա Վալենսքի կոմսին . Կոստան
զնուպոլսոյ դաշնագրական խօսակցութիւն-
ները վեննայի դաշնագրական խօսակցու-
թիւններուն հետ միացնելու համար՝ Գաղ-
ղիոյ արտաքին գործոց պաշտօնեայն կ'առա-
ջարկէ որ Բէշիտ փաշային պատասխանը վեն-
նա հասնելուն պէս՝ անմիջապէս այս քաղա-
քիս մէջ արձանագրութիւն մը շինուի , որուն
մէջ այդ հեռակէտներս պարունակուին . Ա.
որ վեննայի խորհրդակցութիւնը Բէշիտ փա-
շային պատասխանը առաւ . Բ. այս պա-
տասխանը համաձայն է բարձրագոյն պե-
տութեանց տեսութիւններուն . Գ. պէտք
է անիկայ Բեգրպոլսի խաւրէլ իբրեւ հիմունք
մը առաջարկելով Դրան ու Ռուսաստանի
մէջ խաղաղութիւնը նորէն հաստատուելուն :
6. Չէզանէի քով (Ի Փոքրիկն Վալաքիա) պա-
տերազմ կ'ըլլայ : Ռուսերը , որոնց գլուխ էր
Անրէր տեղակալ զօրապետը , Սէլիմ փաշային

զօրքերուն յարձակմունքը կը մերժեն , և կը
բռնագատեն զՏաճիկները որ Գալաֆագի քո-
վերն ունեցած իրենց պատնէշները քաշուին՝
վեց թնգանթ աւար թողլով : Ամսուն 7,8 ,
և 9 օրերուն պատերազմը դարձեալ կը շա-
րունակէ . մասնաւորապէս 8ին սաստիկ ու
արիւնահեղ կռիւ կ'ըլլայ . Ռուսերը շատ
թնգանթ կը կորսնցնեն , ու Տաճիկները
Չէզանէի կը տիրեն . 10ին Ռուսերը Ռատո-
վան կը քաշուին . իսկ Տաճիկները պատե-
րազմի դաշտին կը տիրեն :

7. Գաղղիոյ արտաքին գործոց պաշտօնեայն հե-
տեալ շրջաբերակները կը խաւրէ Կայսեր՝
Գերմանիոյ Դաշնակցութեան արքունիքնե-
րը ունեցած գործակալներուն . Հիմակոսան
եւած խնդրոյն մէջ՝ Գաղղիա Եւրոպայի հա-
ւասարակշռութիւնը միայն կը մտածէ : Թէ
որ աշխարհակալութեան փափաքով վա-
ռուած ըլլար , կայսերական կառավարու-
թիւնը կրնար ուրիշ դաշնակիցներ գտնել , և
իր արեւելք ընելիքներուն հատուցումը ուրիշ
տեղէն ձեռք ձգել : Այս պատճառներուն
համար կը հրաւիրենք զԳերմանիա որ Գաղ-
ղիոյ հետ միանայ , և օգնէ անոր հաստա-
տուն գործունէութեամբ մը , պատերազմը
խափանէ , և հաստատէ այն կարգն որ հաջիւ-
գրուեցաւ :

13. Վեննայի խորհրդակցութիւնը այս արձանա-
գրութիւնը կ'ընէ . Չորս մեծագոյն տէրու-
թեանց երեսփոխանները՝ խորհրդակցութե-
վերջին առաջարկութիւններուն (Տես 31
գեկտ . 1853) Բէշիտ փաշային տուած պա-
տասխանին հաւանցան , և որոշեցին Բեգր-
պոլսի խաւրէլու զանիկայ . (Տես 16) :

Սէլիմը , Մեծին Բրիտանիոյ Բեգրպոլսի
զեսպանը , պաշտօնագիր մը կը խրկէ Գլաքէն
տըն կոմսին այն ծանօթութիւններուն վրայօք ,
զորոնք ինքը բերնով հաղորդեց Ռուսաց կայ-
սերութեան աստենագրալի Դեսսեղոտ կոմ-
սին՝ դաշնակից նաւատորմիդներուն Սև ծով
մտնելուն առթով . (Տես 27 գեկտ . 1853) .

Ռուսաստանի կայսերութեան ատենագրարը
կը ցաւի որ ինչպէս ատենակ մէկ ճամբայ մը
կը բռնուի՝ այն վայրկեանին, որ Վեննա ամե-
նայն ջանք կ'ըլլայ այս վէճը դադարեցնելու .
(Տես 14) :

Տանիմարգայի խորհրդարանին դահերէցը կը
հաղորդէ ազգային ժողովոյն՝ օտար տէրու-
թեանց ուղղուած ծանուցագրի մը ձեւը, որուն
մէջ կը յայտնուէր թէ Շուէտի տէրութեան
հետ միատեղ Տանիմարգայի խորհրդարանը
հաստատ որոշած է չեղօք կենսալու՝ եւրոպա-
կան պատերազմ մը ըլլալու առթին մէջ . (Տես
15 դեկտ . 1853) :

1. Ռուսաստանի պաշտօնէից խորհուրդը հե-
տեւել յայտարարութիւնը կը հանէ . Մե-
ծին Բրիտանիոյ ու Գաղղիոյ իրենց միացեալ
նաւատորմի զորքերն Սև ծով մտնելու տուած
հրամանը՝ բերնով միայն կայսերական դահլը-
շին հաղորդուեցաւ . անոր համար այդ դահ-
լըշը ամէն բանէ առաջ՝ հարկաւոր սեպեց
Լոնտոնէն ու Բարիզէն տեղեկութիւններ
ուզել տալ թէ երկու կառավարութեանց
այս գործողութիւնը ինչ կերպով ու ինչ չա-
փով է . այդ տեղեկութիւններուն հետեւ
թեմէն պիտի կախուի իր յետին գործունէու-
թիւնը . (Տես 13 և 16) :

2. Պելլրատի զգեկին հրամանատար իզգէթ
փաշան՝ կը բռնադատէ Սերվիոյ կառավա-
րութիւնը իր երկրէն դուրս վաճառելու ամէն
նուս հպատակները, և Մուշին ռուս հիւ-
պատոսը արգելելու որ Պելլրատ չերթայ :

Տրուէն տը Լիւի ծանուցագիր մը կը խրկէ
Մուսգիէ մարգիզին, զեսպան Գաղղիոյ ի
Պեռլին . Վէհափառ կայսեր կառավարու-
թիւնը հաստատուն վստահութիւն ունի թէ
Պեռլինի դահլըշը բացարձակապէս բանի պի-
տի բերէ այն առիթը, որ ինչպէս իր դաշնա-
կիցներուն՝ այսպէս իրեն գիմացն ալ ելած
է, իր զգացմունքները իրեն քաղաքագիտու-
թեան օգտին հետ միացնելով, և մի և նոյն
ժամանակը մեծագոյն տէրութեանց պաշտ-
պանութեանը տակ գնելով Տաճկաստանի
ամբողջութիւնն ու իրեն քրիստոնեայ ժողո-
վորոցը ապագայն, որ և ոչ պզտիկ միտք մը
կրնայ հասցնել Բրուսիոյ վեհափառ թա-
գաւորին իշխանութեանը : Թէ որ Ռուսա-
ստան հիմակուան խնդիրը իր ճշմարիտ տե-
սութեամբը մտածել չուզէ, անանկ է նէ՝
կամ ինքը այնպիսի տէրութիւն մը կործանե-
լու գիտմամբ կը գործէ, որ Եւրոպայի հա-
ւասարակընթեանը համար հարկաւոր է .
կամ ինքը նախանձայոյդ կրօնքի մը ոգևոլ
վառուած է, զոր ուրիշ հաւատքի գաւանդու-
թիւն ունեցողները ոչ կրնան ըմբռնել և ոչ
ալ խրախուսել : Ռուսաստան արեւելքի մէջ
միշտ խիստ մեծ ձեռք պիտի ունենայ . և թէ
որ ասոր գոհ չըլլայ ու չընդունի, ըսել է թէ
պատճառաւորներ կը փնտռէ նիւթական ու
բարոյական ամենակարողութիւն մը ստանա-
լու, որ ամենակին մէկ կերպով մը արգարացի
չէ : Գաղղիոյ ու Անգղիոյ գործունէութիւնը
կ'ապացուցանէ, որ իրենց հաստատ մտքեր-
նին դրած են տէրութեան մը այս աստիճա-

նի մեծնալուն գէմ կենալու . այսօրուան օրս
էականը այս է՝ որ Բրուսիոյ ու Լուստրիոյ
բռնած լեզուն նոյն կամքին վրայ կը ցուցնէ
զիրենք : Գաղղիա երկու կողմերէն այն մե-
կուն վրայ պիտի ծանրանայ, որն որ խաղա-
ղութեան նորէն հաստատուելուն աւելի ար-
գելքներ դուրս հանէ . բայց ինքը կը յուսայ
միանգամայն որ ուրիշ մեծագոյն տէրու-
թիւններն ալ իրեն օրինակին պիտի հետեւին :

16. Խաղաղութեան միջնորդութեանը համար բա-
ցուած Վեննայի խորհրդակցութիւնները կը
գոցուին . (Տես 24 յուլիս 1853) :

Հետեւելոտ կոմսը Ռուսաստանի Լոնտոն
ու Բարիզ ունեցած զեսպաններուն ասանկ
կը գրէ . Կայսրը կը ցաւի տեսնելով որ իր
Անգղիոյ ու Գաղղիոյ հետ ունեցած խաղա-
ղութիւնը վստահի մէջ է՝ նաւատորմի զորքերն
Սև ծով մտնելով, որով այս երկու ծովային
տէրութիւններն որ սկզբանէ ի վեր զինքը
նեղ խոթելու դրութիւն մը բռնէր էին, հի-
մա անիկայ աւելի ընդարձակեցին . ի վերայ
այս ամենայնի ինքը կը սպասէ տեսնելու թէ
անոնց նաւերը մեր նաւերուն վրայօք ինչ
գործունէութիւն պիտի ցուցնեն՝ որպէս
զի ետքէն որոշէ թէ ինչ կողմ բռնէ, և ամէն
բանէ առաջ կ'ուզէ որ Տաճկի նաւախուժը
Եւրոպայի ու Ասիոյ ափունքները ամենակին
յարձակմունք չընէ Ռուսի գրոշակի ու եր-
կրի վրայ, և թէ Ռուսի նաւերը Տաճկի նա-
ւերուն պէս իրաւունք ունենան զօրք, համ-
բար և ուտելիք տանելու : Այսօրուան օրս
դիպուած մը բաւական է ընդհանուր մեծ
յեղափոխութիւն մը հանելու, և Կայսրը ա-
ռաջուցմէ կը մերժէ իր վրայէն այն գործոյն
պատասխանատուութիւնը, որն որ այս բա-
նիս նշանը պիտի տայ . (Տես 25 և 31) :

20. Օսթէն-Սաքէն ռուս զորավարը, որ Մուտա-
լիոյ փոխանակ գահերէցի դրուեցաւ, Եաշ
կը հանի :

25. Պրուսիոյ պարոնը, զեսպան Ռուսաստանի
ի Լոնտոն, ամսոյս 16ին (Տես) արուած
ծանուցագրին մտածութեանը համեմատ՝ տե-
ղեկութիւններ կը խնդրէ Գլարէնտըն կոմսէն
նաւատորմի զորքերն Սև ծով մտնելուն վախ-
ճանին ու իշխանութեանը վրայօք : Մի և նոյն
ժամանակը՝ Քիսլէֆ, Ռուսի Բարիզ կեցող
զեսպանը, նոյն տեղեկութիւնները կ'ուզէ
Դիւլերիի գահլըճէն :

26. Պարսկաստան չեղօք կենալու յայտարարու-
թիւն կ'ընէ . Պարսկաստանի կառավարու-
թիւնը իր սահմանադրութիւններուն ապահո-
վութեանը համար պարտաւորուած է ար-
տաքոյ կարգի ջորքերով պաշտպանել զա-
նոնք . բայց ինքը հաստատ միտքը դրած է
Դրան ու Ռուսաստանի մէջ ծնած վէճին
ամենայն կերպով չեղօք կենալու :

27. Էթէմ փաշա Դրան ոստիկանը¹, որ Սեր-
վիոյ վրայօք 1853 տարւոյն զեկտեմբերի 27ին
արուած (Տես) կայսերական ֆերմանը կը
բերէր, Պելլրատ կը համարէ : Փետրուարի 4ին
նոյն ֆերմանը հանդիսապէս կը հրատարա-

1 Գլ. Commissaire.

կուի : 10ին Աղեքսանգր իշխանը պատասխան
կու տայ էթէմ փաշային . Սերվիոյ առան-
ձնաշնորհութիւններուն Սուլթանին տուած
հաստատութիւնը՝ շնորհակալութեամբ կ'ըն-
դունինք . 'ի վերայ այս ամենայնի Սերվիո
կը փափաքի Պոզքէշտի , Աքիրմանի ու Ա-
գրիանուպոլսոյ տաճկառուս գաշնագրու-
թիւնները պահելու , և սրտած է նոյն կեր-
պը բռնելու թէ Ռուսաստանի և թէ Տաճ-
կաստանի հետ , զորն որ այն գաշնագրու-
թիւնները կը ցուցնեն իրեն :

- 28 . Կորչլուքով իշխանին զօրքերը վաւաքիոյ ա-
մէն զօրանխա կէտերէն Գաւաֆագի վրայ
կը քաշեն պաշարելու համար : Իրենց աջ
թևը հունիա , Մակլովց ու Կոչէշգի-Ռու-
մանոյ քաղաքները կ'առնէ . 29ին Պաուսկար-
գէն զօրավարը Չէգանէի կը տիրէ (Տես 6) .
ձախ թևը , որուն կը զօրավարէր Անրէք , 30ին
Պոչէշգի քաղաքը ու 31ին ալ Բոյանա գեղը
կ'առնու , որով բոլորովին կը պաշարուի Գա-
ւաֆագ :

Ռուսաց կայսեր օգնական պատերազմի Օռ-
լոֆ կոմսը վեննա կը հասնի . փետրուարի 8ին
Բեդրպուրկ կը դառնայ :

- 29 . 'Նաբոլէոն կայսրը նամակ մը կը գրէ 'Նիկո-
ղայոս կայսեր , որուն մէջ կ'ոգէ որ արևելք
ղինագագարում մը ըլլայ ու զօրքերը ետ կան-
չուին , որպէս զի գաշնագրական խօսակցու-
թիւնները ապահով կերպով առաջ երթան :
Փետրուարի 9ին 'Նիկողայոս կայսրը կը պա-
տասխանէ նամակին մերժելով այդ խնդիրը :

- 30 . Կոստանդնուպոլսոյ պաշտօնարանին վրայ
մասամբ փոփոխութիւն կ'ըլլայ . Ծովային
ղնուորութեան պաշտօնայ Բիզա փաշան՝
Մէհմէտ Ալի փաշային տեղ պատերազմի
պաշտօնայ կը գրուի , և Մէհմէտ Գըպրըզ-
լը փաշան ալ , որ ինչուան այն ատեն Ագրիա-
նուպոլսոյ կառավար էր , Ծովային զինուո-
րութեան պաշտօնայ կը գրուի :

- 31 . Անգղիոյ Թագուհին կը բանայ բրիտանական
խորհրդարանը . բացման ճառին մէջ՝ այս
խօսքերն ալ զուրցուեցան . Կըցաւինք թէ
ինչպէս չյաջողեցան Մեծին Բրիտանիոյ ,
Գաղղիոյ ու իրենց գաշնակիցներուն արևել-
քի մէջ խաղաղութիւնը պահելու համար ը-
րո՞ւծ ամէն ջանքերը , և մանաւանդ թէ պա-
տերազմը վրայ եկաւ : Անոնք խաղաղութիւ-
նը նորէն հաստատելու համար՝ ջանքերնին
պիտի շարունակեն . բայց որովհետեւ պատե-
րազմին երկարութիւնը կրնայ ծանր կերպով
արևելքի ու Եւրոպայի օգտին փնտս բերել ,
հարկաւոր սեպուեցաւ զինուորական ու նա-
ւական ուժերը աւելցնել , անոնցմով իրա-
ւունքները անցնել տալու համար ու խա-
ղաղութեան հաստատուելուն աւելի ազդու
կերպով օգնելու համար :

Գլարէնաքն կոմսը Պրուսով պարոնին պա-
տասխան կը գրէ . (Տես 16 և 25) . Բրիտա-
նական կառավարութիւնը իր նաւերը անոր
համար Սև Ծով խաւրեց , որ Սինոպ հանգի .

պաճին նման ձախորդութիւններու առջև
առնեն . բայց որովհետեւ ինքը առջինին պէս
հիմա ալ կը փափաքի որ այդ վէճը խա-
ղաղ վերջ մը ունենայ , կերպը կը գտնէ որ
Տաճկի նաւատորմից Ռուսի երկրի վրայ ա-
մենին յարձակմուցը չընէ : Տաճկաստան
տկարագոյն ու փնտսեալ կողմն է . Անգղիա
ղինքը այն մերձակայ վտանգէն պաշտպանե-
լով , զորն որ Ռուսաստանի զէնքերը կը
սպառնան , ուրիշ բան չընէր՝ բայց էթէ
Եւրոպայի քաղաքագիտութեան հիմնական
սկզբունքը պահել , որ Օսմանեան կառավա-
րութեան հաստատութիւնը կը պահանջէ , և
որն որ հինգ մեծագոյն տէրութիւններէն
շատ անգամ քարոզուած է : Ռուսաստան
ինչ կողմ որ պիտի բռնէ՝ անկէց կը կախուի
այս պաշտպանութեան սահմանը , ու այն
պատճառաւ հարկաւոր եղած ընելու գոր-
ծողութիւնները :

Պեռլինի գաշիճը հետեւալ պաշտօնագիրը
կը խրկէ Բոնով պարոնին , դեսպան Բրու-
սիոյ 'ի Բեդրպուրկ , որով պատասխան կու-
տայ Ռուսաստանի Բրուսիացոյ ըրած առա-
ջարկութեանը թէ Աստրիոյ , Բրուսիոյ ու
Ռուսաստանի մէջ գաշնակցութեան ձև մը
չինուի . վեննայի դեկտեմբերի 5ին եղած
արձանագրութիւնը , ու անոր ետեւէն եկած
գաշնագրական խօսակցութիւնները՝ չորս մե-
ծագոյն տէրութեանց մէջ այնպիսի պարտա-
ւորութիւն մը կը հաստատեն , ուսկից որ
Բրուսիա չկրնար ազատ մնալ : Ասկէց զատ ,
սպասելու է թէ ինչ վախճան պիտի ունենան
այն առաջարկութիւններն որ Բեդրպուրկի
գիմացը գրուեցան . վեննայի խորհրդակցու-
թիւններուն հիման վրայ հաստատած : Բրու-
սիական կառավարութիւնը ու ինչէ առթով
չկրնար հրաժարիլ ուրիշ կառավարութիւն-
ներու հետ միատեղ ձեռք զարկած գործքէն .
Աստրիոյ , Բրուսիոյ ու Ռուսաց մէջ զինուո-
րեալ չեզոքութիւն մը պահել ուզելը՝ ձեռք
ձեռքի վրայ գրած կենալ ըսել է այնպիսի
գիպուածներու գիմաց , որոնց ծայրը ճոթը
չգիպցուի :

Գլարէնաքն կոմսը ծանուցագիր մը կը խըր-
կէ Անգղիոյ Բեդրպուրկի Սէյմուր դեսպա-
նին . ասոր մէջ կը ցուցնէ թէ ինչպէս զարմա-
ցեր է անգղիական գաշիճը այն հետեւու-
թեանը վրայ , զոր 'Նեսսեղոտ կոմսը իր ամ-
սոյս 16ին խաւրած (Տես) պաշտօնագրին
մէջ կ'ընէր , և կը մերժէ որ Մեծն Բրիտանիա
ու Գաղղիա ամենին պատասխանատուու-
թիւն մը չունին այն ծանր գիպուածներուն ,
որ ինչուան այս ատենս հանգիպեցան , և այն
գործոյն , ուսկից կրնայ ընդհանուր մեծ յե-
ղափոխութիւն մը ծագիլ՝ այն կողմին դէմ ,
որ խորին խաղաղութեան մը միջոց՝ գնաց իր
գրացի տէրութեան երկիրները գրաւեց :